



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԱՐՁԱԼՈՅՍ  
ԱՐՁԱՐՈՒՆԻ

ՀՐՈՒՏ ԱՐՓԻ

891.99  
u-92

06 DEC 2010

158

ԱՐՁԱԼՈՅՍ ԱՐՁԱՐՈՒՆԻ

ՄՈՍԿՎԱ  
1932



DEC 30 1922

891.99  
4-92

01 JAN 2009

ԱՐՇԱԼՈՅ ԱՐՇԱՐՈՒՆԻ

ԱՐՇԱԼՈՅ ԱՐՇԱՐՈՒՆԻ

ՀՐՈՒՏ ԱՐՓԻ

40385  
0101

123

ՄՈՍԿԻԱ,  
1922



ՄԱՐԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՄԱՐԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱԶԱՐ,

ՀԱԶԱՐ

ԱՐԵՒՆԵՐ

Հազար արևի կարօտն եմ քաշում այսօր ես այնպէս  
 Հազար արևի ճամբան եմ բռնել տենդոտ, սիրակէզ...

Ծնւել է հոգիս դաշտերում պայծառ լոյս Տիեզերքի,  
 Արևների մէջ ինդացել խայտուն արփիաժպիտ,  
 Ուր ծիածանի ճաճանչն է շողուն առանց եզերքի,  
 Ու լոյս է անտակ՝ լազուրը կապոյտ ու սէրն անվախտ:

Եւ տիեզերական անմար Արևի աղջիկն է հոգիս՝  
 Ծիածանների ու ադամանգի քոյրը հարազատ.  
 Գիտէ նա ինդալ ու ժպտալ արևնա խաղ էր տալիս  
 Եթերի ծոցում-արևների հետ-թևբաց ու ազատ...

Աշխարհը փոքրիկ ունի մի արև կապոյտների մէջ,  
 Որ այնքան անգոր ակօս է գծում երկնքի վրա.  
 Մի փոքրիկ արև կարճ է արդեօք դառնալ լուսաէջ  
 Գիշերի գրկին՝ որքան էլ ճգնի, ինչքան էլ խնդա...

Հազար արևի կարօտն եմ քաշում այսօր ես այնպէս.  
 Հազար արևի ճամբան եմ բռնել տենդոտ, արևկէզ...

Կեանք եմ բաժանում բոլորի համար այսօր ես առատ.  
Արևներ տալիս, հազար արևներ-լուսեղ, անարատ...

Սիրտս գանձ ունի, տարածութեան մէջ աղբիւր է  
ժայթոյ,  
Ջերմութիւն յատակ, պարզ ու ճանաչուն-մարգարտի  
հման.  
Դարերի միջին հսկայագագաթ անխորտակ կոթոյ.  
Եւ սէր է սիրտս, ուր լող են տալիս Արևներ միայն:

Ես իմ սրտի մէջ բոլորի համար ունիմ անքանակ  
Հազար, բիւրաւոր արփիածածան արևներ պայծառ.  
Իմ սրտի արեան իւրաքանչիւր հատ, ամեն մի գնդակ  
Արև է կենսոտ և բիւր կեանքերի աղբիւր անսպառ:

Դուք գիտէք արգիօք Տիեզերքի մէջ Արևն ինչ է, ինչ:  
Լոյսի լաբիրինթ, Ջերմութեան քուրա, անհունի բճիճ,  
Կեանքերի աղբիւր, եռանդի մարտկոց՝ անարատ ու ջինջ:  
Առանց արևի ու առանց լոյսի չի ապրի սշինջ...

Կեանք եմ բաժանում բոլորի համար այսօր ես առատ.  
Արևներ տալիս, հազար արևներ՝ լուսեղ անարատ...

Ես աշխարհ եկա մարդկանց յայտնելու Արևի մասին.  
Ես աշխարհ եկա ու Արև բերի ինձ հետ միասին...

Ես հազար արև սրտիս մէջ առած բերել եմ այսօր  
Սյրելու համար մոլոր ու աղքատ սրտերը մարդկանց.  
Հազար արևով ջաներով հրէ-այրոյ ու բոսոր  
Աշխարհը խաւար պիտ դառնա բոսոր-փայլուն արև-  
ցանց:

Անձիր անհունի ես լոյսն եմ բերել արփիածիրան,  
Որ արև կաթեմ համայն մարդկութեան քար գան-  
գերի տակ.  
Որ ամեն մի մարդ աչքերը բանա, ճանաչէ իրան  
Ու ցրէ իսկոյն իրենից հեռու խաւարն անտակ...

Դուք եկէք մարդիկ, ձեր լսեցիներից նեղլիկ ու խոնաւ,  
Վայր ձգէք ձեզսից կեղծ, պայմանական քօղը մերկու-  
թեան,  
Որոնց սուերում ժահրոտ ու հիւանդ ձեր կեանքը  
դառաւ  
Ուր Տիեզերքի անմար Արևի մասերը մեռան...

Ես աշխարհ եկա մարդկանց յայտնելու Արևի մասին.  
Ես աշխարհ եկա ու Արև բերի ինձ հետ միասին...

Իմ հայրը Անհուն Անծիրն է եղել արփիածածան,  
Ուր միշտ կխնդան հազար արեգակ ու բիւր ծիածան:

Ապրում են մարդիկ անբողոք, հանգիստ՝ երէկ ու այսօր  
Ու հայրեր դառնում իրենց պէս մարդուն՝ անոյժ ու  
տկար,

Որպէսզի վաղը կամ նոյն երեկոն թուլանան անգոր  
Ու մեռնին անհետ, չքանան իսկոյն, կարծես, թէ չկան:

Եւ սկ է արդեօք Տիեզերքի մէջ իմ հայրը եղել,  
Ծնել լուսաշող գարուն արգանդից-արև աղջկա.  
Միթէ մի հէզ մարդ, մի հայի որդի՝ անուն-Միքայէլ,  
Որ երէկ կապրէր բոլորի նման, իսկ այսօր չկա...

Ծնել ու մեռնել ու հայրեր դառնալ կարող է միայն՝  
Սոսկ մարդը խեղճուկ հորիզոնների ցանցերում սեղ-  
մած.

Ճիճունների պէս միշտ արևախոյս, խլուրդի նման-  
Ծնել անշուկ, ապրել անիմաստ ու մեռնել կամաց:

Իմ հայրը Անհուն Անծիրն է եղել արփիածածան,  
Ուր միշտ կխնդան հազար արեգակ ու բիւր ծիածան

Հազար արևի ծնունդ կամ սկիզբ չի եղել երբէք,  
Հազար արևի կեանքերով հազար ապրելու եկէք...

Ծնում են մարդիկ տարածութեան մէջ մեռնելու  
համար:

Նեղ հորիզոնի օդականման սեղմ ճիրաններում.

Կորչում են անհետ շտեսած նոյնիսկ արևակամար-  
Ծիածանագուրկ, առանց գիտնալու, թէ ինչ կա հեռուն:

Եւ մեռնում է նա, ում հայրը մի օր մեռել է, ինչպէս  
Նախորդը նրա տարիներ առաջ՝ անհետ, աննշան.  
Եւ ունի՞ արդեօք կեանքը Արևի սահմաններ պէս-պէս.  
Տեսել է միթէ նախորդն Արևի սև օրեր աշնան...

Մեռնում է միայն մարմինը տկար, կեանքը կարծօրեա,  
Որ հորիզոններ իր շուրջն է գծել, ինչպէս սև օդակ,  
Որպէսզի խեղդի, նւազի կամաց ու անշնչանա...  
Չունի հորիզոն հազար Արևի լոյս կեանքը միակ:

Հազար արևի ծնունդ կամ սկիզբ չի եղել երբէք,  
Հազար արևի կեանքերով հազար ապրելու եկէք...

Տիեզերքը մեծ ցանել է իմ մէջ սերմեր Արևի.  
Ճաճանչը շոյող արփիածաւալ ինձ կրարևի...

Ապրել են գուցէ տարիներ առաջ մարդիկ, անհասներ,  
Որոնց սրաի տակ Արևն է վառել ժամանակաւոր.  
Եղել են գուցէ և ապրել անգամ ու ճգնել յայտնել  
Արևի մասին, հազար արևի-կենսաբուխ, բոսոր...

Բայց մինչև հիմա չի եկել աշխարհ որ և է Անհատ՝  
Հազար արևի, անհուն անծիրի որդին հարազատ,  
Որ վառէ անհետ մութ հորիզոններ կայծերով հատ-հատ  
Հազար արևի հրդեհով կայծեղ ու շնչով ազատ...

Առաջին անգամ եկել եմ աշխարհ յայտնելու համար  
Տիեզերական բորբ, բոսորագոյն Արևի մասին.  
Վառել, խարկելու մարդկանց սրտերում արևներ անմար  
Բերել եմ աշխարհ հազար արևներ ինձ հետ միասին:

Տիեզերքը մեծ ցանել է իմ մէջ սերմեր Արևի.  
Ճաճանչը շոյող արփիածաւալ ինձ կրարևի...

Արևը հազար չի հաշւի մատով. նա չունի սահման.  
Ես լոյս եմ հիմա և կեանք անքանակ-Արևի նման...

Գուցէ ինձ ասեն և հարց տան յանկարծ, սակայն ով  
ես դու,

Որ արևների, հազար արևի մասին եմ խօսում.  
Չէ որ քեզ ծնեց հասարակ մի կին, գաւակ ես մարդու-  
Բոլորի նման ոսկորները քո պիտ փթին փոսում:

Եւ միթէ երբէք ասել եմ խիզախ աշխարհի առաջ,  
Որ իմ մէջ խօսող այն Եսը տխաան եղել է մի մարդ՝  
Անուն-Արշալոյս, որ ունի մարմին, ցաւեր ու հառաչ.  
Միւս մարդկանց պէս արեմուտք ունի—պիտ մեռնի  
հանդարտ:

Այն Եսը հսկա Տիեզերքն է ողջ՝ Արև ու Անհուն,  
Որին մօտենալ որ և է չափով չի կարող ոչ ոք.  
Եւ այդ Եսի մէջ չի կարող լինել մօտիկ կամ հեռուն,  
Խաւար կամ վախճան, ծնունդ ու սկիզբ առանձին,  
Չոկ-Չոկ...

Արևը հազար չի հաշւի մատով. նա չունի սահման.  
Ես լոյս եմ հիմի և կեանք անքանակ-Արևի նման...

Հազարն իր մէջ Անհունն է գրկում՝ Արև ու անձիր-  
կեանքը մշտավառ, կեանքը մշտական-այդ լաւ իմացիր:

Հազարը միթէ այն թիւն է փոքրիկ ու սահմանական,  
Որ մարդիկ այնպէս մատիտի ծայրով առնում է գրի-  
կարող է արդեօք իր սեղմ ուղեղում մարդուկ-երեխան  
Պարփակել հաստատ ու տեղաւորել հազարն Արևի...

Եւ այսօր այնքան հազարը մարդու դառել է տափակ <sup>222</sup> <sub>6</sub>  
Ու շաբլոն խօսքի հաւասար ընկեր խօսակցութեան մէջ <sup>20</sup> <sub>6</sub>  
կարող է միթէ տեղ բռնել յանկարծ հազարն անպարփակ  
Մարդկանց ուղեղում, ինչքան էլ լինին հոգիներ անշէջ:

Հազար արևի բծիճն առանձին- հազար է նորից,  
Ինչպէս վերջինի մասնիկը փոքրիկ-արև անքանակ,  
Իսկ Արևն անձիր միշտ կեանք է աւել անյուշ հին օրից,  
Խաւարը ծակել, գիշերը կտրել, ինչպէս սուր դանակ:

Հազարն իր մէջ Անհունն է գրկում՝ Արև ու անձիր-  
կեանքը մշտավառ, կեանքը մշտական-այդ լաւ իմացիր:

Պատմութիւնների խաչածէ շէմքին կանգնել եմ հօր,  
Հազար արևի հիմքերն եմ դնում աշխարհում այսօր:

Այսօր ես եկա, որպէս կարապետ, որպէս մարգարէ  
Տիեզերական Հազար Արևի շողերով լեցուն,  
- Իմ սիրան է Արև, իմ խօսքը՝ կայծակ, իմ կամքը՝ քարէ,  
Իմ ձայնը-որոտ, հայեացքս՝ մագնիս ու երկաթէ ձիւն:

Յայտնում եմ, լսէք. աշխարհը համայն ձեր արևի հետ  
Պիտի խորտակէ նոր մարդը Արև-կամքով, բռունցքով,  
Պիտի այրւին նրա շողերից ու կորչին անհետ  
Տափակ ու սրւած արժէքները հին ու ասուածը՝ կով:

Լուսիններ պայտած իրենց ձիւրին գալիս են արդէն-  
Հրեղէն աստղեր բորբ արևացայտ նրանց ճակատին.  
Կտեանի նրանց ու կասկի յետո -ով կգնա գէմ.  
Ով չի խանձի Արևի շողից, բրբ վրան կաթեն...

Պատմութիւնների խաչածէ շէմքին կանգնել եմ հօր.  
Հազար Արևի հիմքերն եմ դնում աշխարհում այսօր:

1000  
40335



Հազարն արևի այրում է ամեն կապանք ու սահման,  
 Ով ապրել կուզէ՝ պիտ դառնա այրող-Արևի նման:

Մի՞թէ մի գանգի, չոր տափակ գանգի տարածութեան  
 մէջ,

Ուր պահել գիտէ մի խեղճուկ ուղեղ մութ, արփիախոյս,  
 Կարող է նստել Հազար Արևի գանգւածը մեծ,-

Որ սահման չունի, չունի հորիզոն-միշտ արև է, լոյս:

Եւ կեանքը մարդու մի փորձ է միայն, բողբջի նշոյլ-  
 Մահի, սահմանի, անէութեան դէմ, գաճաճութեան դէմ.  
 Իսկ գանգը-սահման, արգելք ու կապանք, որ չի տալիս  
 թոյլ

Կուճել միշտ անմար հազար արևի ծալքերում վսեմ:

Բայց կեանքը մարդու արև պիտ դառնա մի քանի օրից-  
 Ինքը պիտ այրէ իր խեցին-օղակ և նայէ չորս գին.

Ու բանա խկոյն արևների դէմ գանգը - կափարիչ,  
 Որ արևների ջահերը կրակ-գան այնտեղ նստին...

Հազարն արևի այրում է ամեն կապանք ու սահման,  
 Ով ապրել կուզէ՝ պիտ դառնա այրող- Արևի նման:



Ինձանից յետո գալու են մարդիկ արևներ գրկած .  
 Եւ դուք կընդունէք, կընդունէք նրանց-սիրով, գրկաբաց:

Տեսնում եմ արգէն և լսում հիմա դրդիւն, շառաշ  
 Անհուն և անծիր ու անհորիզոն Տիեզերքի մէջ՝  
 Շնորհն ու շնորհն իրար ետևից գալիս են առաջ  
 Նոր կեանքի մարդիկ սրտերը լցրած արևներ անշէջ..

Պիտ խանձեն նրանք հորիզոնը ձեր-մշուշոտ, տափակ  
 Հազար արևի պայծառ ջահերով-բորբ, արփիածոր,  
 Որ լոյս ստանան և բացւին խկոյն աչքերը ձեր փակ  
 Ու արև դառնա աշխարհը ձեր ողջ-թէ սար և թէ ձոր...

Ինձանից յետո գալու են մարդիկ արևներ գրկած .  
 Եւ դուք կընդունէք, կընդունէք նրանց-սիրով, գրկաբաց

Գալիս է արդէն Հաղար Արևի Որդին Եղակի.  
Արև պիտ ցանէ՛ դաշտ ու սարերում, քաղաք ու այգի...

Եւ ծիածանը ուսից վար կախած, որպէս վերարկու,  
Ճակատին մեծ աստղ-լուսաւոր աղբիւր հինգ անկիւնանի  
Կուռ բուռնցքի մէջ մուրճ ունի երկաթ-ձայնեղ, ա  
հարկու-  
Իսկ ոտների տակ-գործարան, քուրա, անիւներ քանի...

Եւ նա կկապէ իրեն ուղեղի ներւի հանգոյցին  
Պղնձէ թելով դինամոնների ողնաշարը պաղ.  
Կթամբէ տարերք-ջրվէժ, փոթորիկ, վեներա, լուսին,  
Որպէս փորձառու, որպէս յաղթական ձիավար անվախ:

Գալիս է արդէն հաղար Արևի Որդին Եղակի.  
Արև պիտ ցանէ՛ դաշտ ու սարերում, քաղաք ու այգի:

Փետրուար 1922թ.  
Մոսկու

## ՀՈԿՏԵՄԲԵՐ

պոէմ Մեծ Յեղափոխութեան  
նախօրեակի

\*

Սմբոխների կամքն եմ այսօր ըմբոստացած, —  
պիտի ստանիմ նրանց ինձ հետ հաց ճարելու,  
պիտի ստանիմ և իմ ճամբին պատահելիք ամեն  
արգելք

պիտի հալեմ...

Սովածների հայեացքն եմ ես արևծարա: —  
Պիտի այրեմ աշխարհը ողջ հնադարեան:  
Եւ ձենձերը բուրվառի մէջ խնկի նման  
ուտներիս մօտ պիտի պառկին,  
որ յազենամ...

Զրկւածների շորցած անէծքն եմ դարաւոր,  
պիտի ընկնեմ, որպէս կայծակ հրաբորբոք՝  
տիեզերքի մէջ,  
պիտի վառեմ շտեմնւած մի մեծ քուրս  
հացի համար,  
որ տիեզերքը տաքութիւնից կծիկ դառնա:  
Ես - Սմբոխն եմ սոված, լլկած, արհամարւած:

Ես ~ դարերի բեռը մէջքիս՝ զրկւած սարուկ՝  
անհաց, անտուն:  
Ես—համբերող ու հնազանդ գրաստ ~ մարդու  
Ոգին եմ մեծ,  
որ համբերեց դարեր, դարեր իր թամբի տակ:  
Ես—կուռ ոյժի բազմակեզու, բազմակաշի ճըն-  
շւած մարդն եմ երկրի:  
Ես—կենսատու ոյժն եմ հողի, գործարանի:  
Ես—աշխարհի տէրն եմ հզօր այսօրւանից...  
Ես—Աշխատանք:  
Իմ անունը՝

ՀՈԿՏԵՄԲԵՐ.

Կծիկ է դարձել քաղաքը գեհէն,  
գալւորել վախից դարձել է կծիկ,—  
գլուխը պահել իր թաթերի մէջ  
շնչում է գսպած ու դողում անից...  
Կծիկ է դարձել գործարանը մեծ  
պարուրել իրան սև գիշերներով,  
որպէս ուրւական թոյն զայրոյթների  
նստել է խորունկ քաղաքի շէմքին—  
ճանապարհների ու աշխարհների  
հանգոյցի վրա, որպէս գամբու շուն  
և անա—անա պիտ դարթնի կարծես...  
Կծիկ է դարձել գիշերն աշնան  
գիշերը մրոտ, գիշերը—կոյր բու...  
Եւ կարծես վախից, սոսկումից կարծես  
փակել է մատով աչքերը ճակտի,  
որ չկասկածեն, թէ շնչում է նա...  
Կծիկ է դարձել և աշխարհը ողջ—  
քար ու մարմարիոն պալատներն այրի,  
խեղճուկ գիւղացու խրճիթը վերջին—  
դարձել են կծիկ, մնացել շւար...

Եւ քամին անգամ, խենթ քամին աշնան  
զգում է այսօր, հասկանում է լաւ,  
որ աննպատակ դռները բաղխել  
էլ իմաստ չկա գոնէ այս անգամ,  
որ սոսկումը մեծ՝ գալիքը վաղան  
այնքան զօրաւոր, այնքան անարկու  
փշրում է ամեն սրտերի դռնակ,  
որ իգուր խփել դռների փեղկին —  
ծխնելոյղի մէջ պար բռնել վախի,  
էլ իմաստ չունի գոնէ այս անգամ...  
Զգում է քամին, հասկանում է նա: —  
Եւ ինքն էլ նոյնպէս գարձել է կծիկ..

2

Ի՞նչն է խորունկ —  
վախից ծնած երկիւղը խոր,  
թէ անլուսին գիշերը մութ հոկտեմբերի...  
Ո՞ւմ համար, ի՞նչ  
այդ գիշերը պիտի բերի...  
Ով կհարցնի որոշակի,  
թէ գիշերը — մռայլ, անլոյս, յոգնած յղի  
ի՞նչ պիտ ծնի — մանչ, թէ ազլիկ...

Ով կյանդգնի դուրսը մնալ այդ երեկո:  
Ով դուրս կգա իր բներից, թէև վեցճարկ...  
Դուրսը ի՞նչ կա —  
դուրսը խոցոտ — գողի գիշեր:  
Դուրսը քամի ու հարամի...  
Աշուն, անձրև, ուրիշ ոչինչ:

— Լաւ սեղմեցէք փեղկը երկաթ պատուհանի,  
դռան նիզեր փակել ամուր չմոռանաք...  
Հա, լապտերը պատկերի մօտ սեղանատան  
վառ պահեցէք, թող նա մնա:

Փողոցը որբ մանուկ է մերկ, խնամազուրկ.  
մեծ քարաշէն տների մէջ ընկել է վար...  
— Ինչու մոռցան այս երեկո լապտեր վառել  
անկիւնների սիւնի ծայրին,  
կմտածէ որբ երեխան:  
Միթէ երկնի լապտերի մէջ հէնց այս գիշեր  
նիւթը պակսեց պատահաբար...

Միթի մէջ լուռ մի քանի սև սիլուէտ:  
Մի քանի մարդ գիշեր դառած  
զնում են: Ո՞ւր...

—Անցիր, ընկեր, անցիր առաջ...

Սա անտառ է և ոչ քաղաք:

—Քայլիր, ընկեր, յետ մի մնա,

Մի քանի ժամ, մի քիչ յետո

արևելքը կպղնձէ...

Կեղևի արև, թէև աշնան ու Չերմագուրկի,

Կաաքացնէ քեզ էլ, ինձ էլ...

3

Արխանգելսկուց մինչև Սև ծով,

մինչև ափերը քարքարուտ յուզուող ջրի,—

Տրապիզոն, Մուշ, Ալաշկերտ,

Թեհրան, Թաւրիզ ու Էնգեւլի,

մինչ աւագոտ Թուրքեստանի դաշտերն արև,

վազրի նման, որպէս գազան աշխարհաւեր,

որ դեռ երէկ այնպէս ձայնոտ երգում էր նա.

— „боже, царя“...

և նոյն թափով դէմը պառկած խրամատի

թուրք և հունգար, չեխ, սլովակ, գերմանացի

բանուորների կրճքերից ներս

իր արձձէ գնդակը տաք խրում այնտեղ,

իրբև նւէր ոռւս բանակի,

այսօր անձայն կարծես յոգնած ընկել կողքի—

ու երկարել իրանը իր—

ոռւսական բանակը մեծ ութը միլլիոն...

Անաստղ գիշեր...

Ով կքնի այս երեկո...

Ով կտեսնի գիշերուա բութ հայեացքի մէջ,

թէ ինչ մըրբիկ խաղ է սկսել

հէնց գանգի տակ—իւրաքանչիւր

ոռւս, եակուտ, չոււաշ, չեչեն

գինւորների...

Ցուրտ է աշնան գիշերը մութ...

Սակայն ում ինչ, թէ ցուրտն յանկարծ

խրամատի անցքերով նեղ

դէմ գա իրենց...

—Եթէ զգաս ցուրտը աշնան կաշուի վրա,

ընկեր, մի աստղ հրանօթից երախից դուրս

երկինք ձամբէ,

որ տաքանաս...

Իսկ թշնամին....

Ինչ թշնամի, ինչպէս, հրատեղ...

—Միթէ՛ դէմիդ խրամատում քնած մարդիկ  
երբ և իցէ ինձ թշնամի,  
քեզ թշնամի եզել են միշտ...  
Լսել էս դու երբ և իցէ,  
որ մի հունգար  
(հէնց նրանցից, որ յիսուն քայլ մեր դէմ  
ու դէմ

խրամատի ցուրտ հողի մէջ  
հրացանի հետ մտել է քուն,)  
ձեր Տամբովի գիւղերի մէջ զրկէ հողից  
խեղճ գիւղացուն...

Իսկ դու տեսար մի օր գոնէ,  
որ մի բանուր յոյն, սլովակ, գերմանացի  
գա գործարան Պուտիլովի  
ու գործադուլ անող տղոց  
տանի Սիբիր...

— Իսկ մենք ինչո՞ւ ելանք Կարպատ,  
հասանք Թաւրիդ, մտանք Լեով...

— Դէհ, զուք ասէք, ձեզ, ձեր որդոց  
չէք բավական հողը գիւղի,

որ թողիք տուն, կին, երեխա,  
եկաք օտար քաղաք ու դաշտ  
դարձնելու խուլ անապատ...  
— Ինչու եկանք, ո՞վ բերեց մեզ...  
— Ցուրտ է, ընկեր:  
— Թիւթիւն ունիս...

4

Ինչ:

— Այս գիշեր պիտի ծնւի մի մանուկ  
անուն — Հոկտեմբեր,  
ճակտին՝ հնգանկիւնի մի աստղ...  
— Սուս, մի խօսի, ընկեր...  
Սմոլնի, Պետրոգրադ որոշում են անում...

Այսօր, այս գիշեր, հիմա  
նստել են այնտեղ խորհրդի—  
Լենին, Զինովև, Տրոցկի...

Միայն Սմոլնի, Պետրոգրադ:  
Միայն Խորհրդների Համագումարը Երկրորդ  
պիտի ծնին մի մանուկ—երեխա:  
Նրանք միայն կերկնեն այս գիշեր, այսօր...

Իսկ այնտեղ—

գերմանական բանակի դէմ,

ուր պառկել է գետնին, թաց հողի վրա  
տասներկու միլլոննոց բանակը ցարական,  
չի՛ երկնում և այնտեղ ամեն մի զինւոր...

Իսկ այնտեղ—

քաղաքի հեռու թաղերում,

ուր գիշերները բանւորի ոսկորները անմիս  
համբուրում են տախտակէ յատակին,

ուր բանւորի կապոյտ շապիկից ջուկ  
սենեակում տեղ ունին տասն և չորս տոտիկ,

չի՛ ծնւում նոյն երեխան—

արիւնոտ, արևոտ՝ մանուկ...

Նայեցէք: Բայց լաւ:

Չէ՞ք տեսնի արդեօք, թէև կոյր գիշերւա մթում  
մեծ թուխսը, որ իջել է երկիր...

Մի՞թէ չի պսպղա, թէև աղօտ

հնգանկիւնի աստղը բոսոր սւինին

իւրաքանչիւր զինւորի, բանւորի,

որ մոռացել է կարպատներ, Երզնկա, Էնգելի...

Բայց ինչո՞ւ այսքան արճիճ գիշերը

թափեց երկիր:

Ինչո՞ւ թոյն չեն թքում այս գիշեր աստղերին  
քաղաքի գործարանները վիշապ:

Ինչո՞ւ սև և ոչ թէ տատոտ երկինք...

—Սուս, լուր, չեն խօսի այսպիսի օր...

—Գիշերը յղի է, գիտցիր:

—Մի՞թէ նա է եղել յղի

պատմութեան, ժամանակի ընթացքում,

մի՞թէ առաջինն է նա,

մի՞թէ նա...

Եւ ինչո՞ւ այսօր...

Իսկ գիշերը Հոկտեմբերի ինչ է արդեօք...

Արդեօք աղջիկ հուր հրեղէն—

խորունկ աչքեր, անմար ժպիտ ու շէկ վարսեր,

որ երկունքից յետո կտա անզին դոճար—

իրեն նման անզոյգ փերի...

Թէ՛ մի գուցէ պառաւացած

քոստա, քաւթառ պոռնիկ է մերկ,

խաւարի մէջ մի քանի զոյգ կոյր լակոտներ  
պիտի ցնկնի...

Միթէ հիւանդ վայրի կատու,  
որ պիտ վիժէ ծնունդն իր կէս գիշերին  
անմիջապէս լափէ նրանց,  
նր ուրիշին չդառնա կեր...

Արդեօք մի մայր, մի հերոս կլին,  
որ չի սոսկա տարերքների խօլ խաղերից  
և բքաշունչ ձմրան շեմքի հէնց մէջտեղին  
յաղթահար բիւր կորիւններ պիտի ծնի,  
արևակամ պայքարների առաջնորդներ,—  
նոր արևներ բարձրացնելու երկրի վրա..

6

Կրոնշտադա:

Վնդացին

մրսած շան նման

թնդանօթները նաւահանգստից:

Գնդացիքը կոկորդը մաքրեց

արևածագի առթիւ

ու շարականեց—

„առաւօտ լուսո“...

Իսկ երկինքը,

որպէս պառաւ կրօնամոլ,

նստեց լալու:

Պետրոգրադ:

Տանիքների վրա,

նկուղների մթում,

հէնց շատերի սրտերի տակ

տեղ է բռնել գաղտնիքը խոր

ու սոսկումն անաբեկած

առաւօտեան դէմ:

Իսկ նրանց կողքին

նստել են,

որպէս վախցած թռչուն,

գնդացիներ...

Վրդ, ըզ, ըզ...

Բնմ, բնմ, բնմ...

— Թնդացէք այդպէս անուշ,

հազացէք այդքան խրոխտ,

թող աշխարհը կարմրի

ձեր հազոցի կարկառից...

Զարթնեցրէք բոլորին:  
Արժին արգէն կծագի:  
Ով յետ մնաց—կուշանա:

Յն—քի, ցն—քի...

Շշշ, շշշ, շշշ...

Վրդ—ըզ—ըզ:

Երկաթուղու գծերի  
զուգահեռականների մէջ  
խրեցին անծայր վագոնների  
կարաւաններ..

Աշնան տարափոխ թռչունի պէս  
նրանք գառնում են տուն:  
Ովքեր են, սրտեղից, ինչու:  
Նրանք—

արևի կարօտ մարտիկներ  
արխնի զաշախց հեռացող՝ զոհեր,  
թշնամու համար տանում են—  
նւէր...

—Թշնամի:

Միթէ մնաց թշնամի:

Այո: Նա կա:—

Այնտեղ է հիմա նա,  
ուր տանում է նրանց ուղին—  
ուղիդ դէպի տուն:

Այնտեղ, ուր երեք տարի  
չխնկեց երկնքի ճակատին  
գործարանը առաւօտեան:

Այնտեղ,

ուր տակաւին կհորովւի  
սալոններում, կաֆէների մէջ—  
„յաղթանակ մինչև վերջին  
կաթիլ արեան“:

Այնտեղ, այ այնտեղ:

Մտակա, խարկով, Ռոստով..

Եւ գնացքը ձեպընթաց  
նրանց համար զարձեկ էր  
սողացող կրիա...

Ով պիտի տա նրան  
մտքի արագութիւն...

Սմռնի—

տաճարների տաճար,  
ուր յղացին ամբոխները  
իրենց մանուկն—արիւնտա՛  
անշապիկ, բոկոտն երեխա —  
Հոկտեմբեր:

Սմռնի:—

Դու պոկեցիր խիզախօրէն  
սիրտն արիւն, արեաներկ  
ամբոխների կրճերից  
ու նետեցիր պատուհանից դուրս,  
որպէս դրօշակ մարտի  
և յաղթութեան:

— Մենք էլ հիմա չենք սոսկա,  
չենք վախենա սրտագող..  
Ծակեցէք այժմ դուք նրան,  
գնդակ խրէք նրա մէջ:  
Մանուկը ծնուեց արդէն:

Դեկտեմբեր 1921թ.  
Մոսկա

Ս Պ Ա Ր Տ Ա Կ

## 1

Հնցած գրքիս էջերի մէջ  
 քո անունը, որպէս մի խենթ,  
 որպէս մի մարդ արևակամ,  
 որ հարաւի պայծառ, կրակ—  
 թէժ արևը իր սրտի տակ  
 առել, իջել  
 վէս Այպերի գագաթներից  
 դէպի Քաղաք—  
 դէպի Հոռվմ,  
 որպէս հեղեղ,  
 որպէս ժայթքումը վեղումի—  
 ես կարդացի:—

## 2

Ուսուցիչս մորուքաւոր  
 ակնոցների միջից հազիւ  
 մանր տառերն իմ գրքի  
 փորփրելով բռն ճայեացքով,  
 քո անունն էր  
 կապում դժւար.  
 յիշողութեան կապոցները  
 քանդում դանդաղ,

որ մի գուցէ գտնէ այնտեղ  
պահւած զէպքեր  
պատահական:—  
Եթէ յանկարծ  
բնութիւնը  
անէր կատակ գարձալի  
և ուսուցչիս  
սեպանման մորուքը սուր  
ուղեղի տեղ տեղաւորէր  
գանգ—արկղի տակ,  
գուցէ փորել կարողանար  
իր սրտթեամբ  
հնցած էջերը պատմութեան,  
քան թէ մնար  
իզուր—անպէտք  
լոկ յաւելւած իր կզակին:  
...Եւ նա դժգոհ  
ժամացոյցի սլաքի մօտ  
աննում էր կանգ  
ու բարկանում,

որ զանգն այսօր  
երկու վայրկեան ուշ են խփում:

3

Անցնում էինք  
բոլորս այնպէս,  
հարեանցի թերթում էջեր  
հնցած գրքի,  
որ պարտքը մեր դպրոցական,  
սովորոյթը մեր դպրոցական,  
լոկ կատարենք...  
Գուցէ այսօր իմ անցեալի  
ընկերներից շատերը,  
որ պատմութեան  
հնցած գրքի փոշու վրա  
նոր հաստ շերտեր աւելացրին,  
քեզ մոռացան չտրորովին  
այն օրւանից,  
երբ ուսուցիչս տեսրակի մէջ  
գրչակոթով  
երեք կամ չորս նշանակեց:

Իսկ ես ինչո՞ւ  
 այսօր յանկարծ Մոսկւայում  
 յիշեցի քեզ:  
 Ինչո՞ւ այսօր,  
 այո, այսօր  
 երբ անցել է շատ ժամանակ  
 իմ մանկութեան օրերից յետ,  
 երբ կարդացի  
 մաշած գրքի  
 էջերի մէջ մի քանի տող  
 քեզ նւիրած,  
 յանկարծ այնպէս անսպասելի  
 զարթնեցրի ու կանչեցի  
 քո հեռաւոր գերեզմանից,  
 որ գաս ինձ մօտ:  
 Չէ որ ուղիդ տասը տարի  
 սրանից առաջ դասարանում,  
 իբրև անսուտ ճշմարտութիւն  
 մեր ուսուցիչն այնպէս վստահ  
 իր կարճատես ուղեղի մէջ

ամբացրած, յայտարարեց,  
 որ Սպարտակ չկա, չկա,  
 իսկ Հոովմը — կա, կմնա...  
 Եւ միթէ նա չաշխատեց  
 նստեցնել մեր ուղեղում,  
 որ ըմբոստը —  
 թեկուզ խիզախ,  
 թեկուզ լինի Ալպերի շալակին,  
 պիտի մեռնի —  
 ով էլ լինի,  
 երբ էլ լինի: —

Այո: —  
 Բայց ես յետո՞ միայն  
 տարիներ անց  
 կարողացա հասկանալ,  
 որ կաղամբէ իմ ուսուցչին  
 ուղեղի մէջ  
 երբէք — երբէք չէր պարփակւի  
 զաղափարներ,  
 որ քանի կա Հոովմ, Բաղաք —

պիտի ծնւին Սպարտակներ  
և վերջապէս Հոովմը մեծ  
պիտի ընկնի:

Գ  
Քեզնից յետո մինչև այսօր  
դևի նման  
մեր հոգու մէջ, սրտի վրա  
նստել է սև Հոովմը դև:  
Լեզիոններ,  
Կեսար, Սուլլա  
ու Կիկերոն  
մինչև այսօր,  
մինչև հիմա  
նոր Հոովմի պատերի տակ  
աւիններով ու աշախուհ  
նստել են շատ,  
պատրաստ, զինւած...  
Թէև գիտեն,  
որ Սպարտակ չկա այսօր:  
Թէև գիտեն նրանք բոլոր,  
որ դու ընկար արևախեղդ  
Կիսածարաւ Հոովմի ճամբին:

Անցան դարեր:  
Հոովմը ծեր ծնեց սնթիւ  
նոր Հոովմներ:  
Ու տարածեց երկրի վրա:  
Փռեց թևերն երկաթաշիղ,  
սարդի նման—փռեց ոստայն՝  
երկրագնդի շուրջը բոլոր,  
որ թէ յանկարծ նոր Սպարտակ  
ծնէ յանդուգն,  
խկոյն խեղդէ:  
Թէև անցան շատ տարիներ  
այն օրերից,  
թէև չկան, չեն մնացել  
անուաները հին, վաղեմի,  
սակայն կան դեռ մինչև այսօր  
եղկրամասի աւեր մասեր,  
որ հաճոյքով մի քանի մարդ—  
ծեր, ալևոր  
բահի ծայրով,  
կացնի կոթով

հողն են քանդում  
զգուշութեամբ,  
որ գուցէ թէ  
որ և է բան գանեն յանկարծ,  
որ պատմութեան մութ էջերի  
սեի վրա  
արև բանան:

7

Անցան դարեր:—  
Ընկաւ Սպարտակ:  
Հոովմը զգաց իրեն փրկւած  
խռովարար սարուկներից...  
Բայց Հոովմի,  
նոր Հոովմի դռների մօտ  
մի շարք մայրեր  
ծնեցին նոր  
անթիւ, անթիւ Սպարտակներ...  
Սակայն ինչ փոյթ,  
եթէ այսօր  
մի շարք անուն գառել է նոր:—  
Հոովմի տեղ՝

Բերլին, Փարիզ,  
Լոնդոն, Մոսկւա...  
Կամ միկնոյն չէ,  
որ երկաթէ միաններով,  
սիրան արև  
գործարանի բանւորն ուժեղ  
Սպարտակի զլխարկ հագել...  
Եւ կա արգետք տարբերութիւն,  
թէ որտեղ է ծնւել հսկան—  
գաղջ հարաւի երկնքի տակ,  
թէ զաւօղի ներքնայարկում,  
խակ հնոցը  
կամ վառ քուրան  
նրա համար գառել օրրան...

8

Եւ ես այսօր,  
դարեր յետո  
զալիս եմ քեզ այցելութեան:  
Այսօր, այս,  
երբ մենք արդէն  
մտանք Հոովմ,

գալիս ենք մենք

Սպարտակին այցելութեան:

...Բանւորները գործարանի՝

Սպարտակները նոր կեանքի

իջան կուի ասպարէզը.

իջան,

որ այս անգամ չնահանջեն

սև Հոովմի քար պատերից,

իջան.

որ էլ ինչ էլ լինի

մտնեն Հոովմ...

...Հոովմն ընկաւ

Հոկտեմբերին -- 17 թւի:

Հոովմն ընկաւ...

23 Յունւար 1922թ.

Մոսկւա

ԱՇԽԱՏԱՆՔ

(Էպոս)

Որպէս զուբրը Բեղովէժի,  
 որպէս ջուրը ջրվէժի—  
 աշնան մռայլ փոթորկի պէս,  
 հին ասուածը նախամարդու,  
 հին ասուածը—Եհովան  
 իր Եղեմում—վանդակի մէջ,  
 որպէս վայրի վագրը յանկարծ  
 թակարդ ընկած,  
 կմռնչէր...

Իսկ Ադամը  
 յետ չնայեց Եղեմից ներս,  
 ուր տակաւին ասուածը հին  
 կբորբոսար իր բանդի մէջ:  
 Յետ չնայեց ու չզղջաց,  
 որ զրկեց ինձորներից...  
 Իր յետևից լսում էր դեռ  
 իրեն ծանօթ ձայնն ասածու:  
 Լսում էր դեռ և անբողոք  
 անցնում առաջ:

Եւ Եղեմի բռնակալը,  
 բռնապետը զրախտի  
 զեռ կը ոռնար,  
 որ իր ծառան,  
 որ իր ստրուկն երէկեա,  
 այսօր այնպէս անհոգ, անձայն  
 կիջնի աշխարհ...  
 Որ նա — գոռոզ, հպարտացած  
 յետ չնայեց զեթ մի անգամ:  
 Եւ նա — Աղամ,  
 որից այնքան սպասելիք  
 ունէր աստուած...  
 Եւ նա — Աղամ,  
 որ զրախտի պատերի տակ  
 խեղճ էր այնպէս ու մոլորուած  
 հիմա — գոռոզ, յետ չնայեց  
 զեթ մի անգամ:  
 — Ես, աստուած եմ,  
 իսկ նա հիւլէ...  
 Ունիմ Եղեմ,

իսկ նա — ոչինչ...

Նա, — այդ հիւլէն,  
 որ զեռ երէկ, այսօր, հիմա  
 իմ գրախտում կուտէր  
 խնձոր.  
 Նա, որ իր հեա  
 տարաւ ոչինչ,  
 որ պիտի գա,  
 իմ սոսերը ըանալու  
 իր արցունքով.  
 Նա, որ զիտէ,  
 թէ ես — աստուած ամենազօր  
 ու պահանջկոտ  
 պիտի պատժեմ նրան, —  
 մարդուն, որ հասկանա,  
 թէ ասածու մօտ  
 պիտի լինի միշտ հնազանդ:  
 Այդ մարդը հէզ իմ գրախտի,  
 իմ Եղեմի դռներից դուրս  
 ինձ կյեպնէ...

Եւ Երեմի գոներից գուրս  
 նետեց յանկարծ  
 մի չոր անէծք նախամարդուն  
 նետեց աշխարհ անէծքն իր,  
 որ զա կախուի նախամարդու  
 ճակատից վար,  
 որպէս սև քար...  
 Մի չոր անէծք,  
 որ Եհովան պահել էր իր  
 նկուղներում,  
 իբրև պատիժ...

Նախկին բանտի կալանաւոր,  
 Եհովայի երկու սարուկ—  
 պատահեցին գրախտից գուրս  
 նոյն վիճակում...  
 Մէկը— Ադամ,  
 մարդն առաջին.  
 միւսն անէծք— Աշխատանք:  
 Պատահեցին ու հասկացան  
 նրանք իրար:

Պատահեցին ու խօսք տւին  
 այդ օրւանից նրանք իրար,  
 որ կդառնան լաւ բնկերներ  
 ու կքանդեն գրախտ կոչւած  
 բանդը վերին  
 Եհովայի հետ միասին:  
 Վարը՝ այնտեղ գրախտի տակ,  
 ուր Ադամին Աշխատանքը  
 հասաւ իսկոյն,  
 իբրև անէծքն աստծու,  
 մարդը կանգնել իր ընկերոջ  
 թեկն յենւել-յետ է նայում՝  
 թէ վերևում՝  
 գրախտ-բանտում  
 աստուած կոչւած բռնապետը  
 ինչ է անում...

— Դու աստուած ես  
 ես լաւ գիտեմ,  
 գիտեմ նաև-ուսիս գրախտ,  
 իսկ ես— նախկին անէծքը քո,

Գլորեցիր զբախտից վար...  
Դու գորաւոր — հօր ես գու,  
Իսկ ես-մքլած ու  
Կենսագուրկ նկուղիդ մէջ  
պառկած մի իր էի միտքս:  
Բայց մենք նորից...  
Կպատահենք:

Աստուած սոսկաց:  
Ինչ:  
Իր անէծքը, որ նա տւեց,  
Իբրև ճրի մի յաւելած  
Իր վրէժի ու բարկութեան-  
նախամարդուն՝ իր անէծքը  
որ այն ըմբոսա, խիզախ  
մարդուն նորից  
պիտի բերէ ստրկութեան,  
այժմ այնտեղ-Ազամի՛ հետ  
Ինչ է խօսում:  
Միթէ բոլոր սյժերն իր  
պիտի դառնան այնպէս

ըմբոսա, եթէ յանկարծ  
զբախտից գուրս  
գանեն իրանց»:

6

— Ես անիծում...  
Ոչ, ոչ: Տեսա,  
Թէ ինչ դառաւ անէծքն իմ:  
Չեմ անիծում  
երկրորդ անգամ:  
Չեմ անիծում,  
որ աւելորդ մի թշնամի  
Նդեմից գուրս չաւելանա...  
Ով կա այդտեղ  
եկէք խկոյն:  
Այսուհետև իմ պարտէզի  
դռները կուռ երկաթներով  
պինտ փակեցէք...  
Այսուհետև իմ Նդեմի  
դռներից գուրս էլ ոչ ոքի  
երբէք, երբէք—  
բաց չթողնէք...

Եւ դրախտի դռներն ամուր  
կողպւեցին,  
որ էլ երբէք դրախտ — բանտի  
ստրուկներէից  
աշխարհ չիջնեն...

7

...Անցան դարեր:  
Աստուած յանկարծ,  
երբ գոհ, ուրախ իր պարտիզում  
գուրս էր եկել վթուսանքի,  
յիշեց այնպէս,  
որ դրախտից մի առաւօտ  
գուրս էր նետել երկու խիզախ  
արարածներ...

Յիշեց,  
որ այդ յանդուգներից  
մէկը կարծես, (որը սակայն)  
լաց էր լինում յուսակաուր,  
թէ...աղերսում:  
Եւ շատ ու շատ մնաց գժգոհ,  
որ տակաւին նա չէր լսել

իր դրախտի դրսի կողմից  
յուսակաուր աղերսածայն...

— Գուցէ նրանք չկան արդէն,  
գուցէ մեռան...

Բայց առանձին մի հաճոյքով  
ուզեց տեսնել դրախտից գուրս  
երկու խիզախ մարմինների  
գանգերը շոր,

որ շօշափէ իր ինքնագոհ  
ետը աստծու...

Ուզեց զգալ հպարտութիւն,  
որ ըմբոստը, խիզախ հոգին  
պիտի մեռնի դրախտից գուրս...

Մինչ մտքերով երջանիկ  
կուզէր ապրել հաճոյքն իր  
Ենովայի,

գուռզացած  
հրամաններ կծրագրէր  
սոսկումի,  
գրախտ ընկաւ անսպասելի

իրարանցում...

—Եկան, եկան, քանդեցին:

...Եւ շփոթն այնքան արագ  
գրկեց բոլոր էակներին,  
որ բռնակալ հին Ենովան  
լըջութիւնը չպահպանեց  
ու շփոթի հոսանքի հեռ  
ինքն էլ տարւեց:

Ու դրախտի շփոթի մէջ  
երեացին երկու նորեկ—  
հսկա էակ:—

Մէկը — մարդը ժամանակի,

միւս — Աշխատանք:

Երեացին,

որ կոստումն իրենց

իրագործեն:

—Միթէ սրանք

անդօր, տկար, լքւած, մորթ

մարդու որդին է արդեօք,

իսկ նա՝

միթէ անպէտք, մըլած

Ենովայի անէծքը հին:

Միթէ նրանք,

երկուսն այս՝

աշխարհն ողջ

կառուցեցին:

Միթէ սրանք

տւին շարժում

նիւթին մեռած:

Սակայր ասուած

չկար այնտեղ բոլորի մէջ,

չէր երևում:

Եւ դրախտի

մրոտ, սեցած դրախտի մէջ,

կործանուած, հին

պատերի տակ

գտան յանկարծ

կծիկ դարձած մի դողացող

խեղճուկ էակ:





22315